[redacted]

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 6 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՐՈՇԵՑ

1.Քաղաքացի [redacted] դիմումը բավարարել մասնակի՝

1)հաստատված համարել ավագ բուժաշխատող Անդրեյ Ավոյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 4-րդ, 5-րդ ենթակետերի պահանջների խախտումները և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Անդրեյ Ավոյանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել համապատասխան իրավասու անձին.

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2)մերժել դիմումը ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետի մասով՝ նկատի ունենալով, որ դիմումի մեջ նկարագրված կոնկրետ արարքները Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, կարող են առաջացնել քրեական պատասխանատվություն:

2.Ավագ բուժաշխատող Անդրեյ Ավոյանին առաջարկել անհապաղ՝ շարունակական մասնագիտական զարգացման շրջանակում, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան անցնել բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների վերաբերյալ դասընթաց:

3.[redacted] ռեգիստրին՝ ՀՀ օրենսդրության համաձայն ռեգիստրի պաշտոնական կայքի [redacted]:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՈՒՆԻՑ՝

ՆԱԽԱԳԱՀ՝ **ԻԶԱԲԵԼ ԱԲԳԱՐՅԱՆ**